ճառումից գոյացած գումարով օգնել ամենաաղ-
քատ գիւղացիներին և կամ համայնքի ամենակա-
ւոր ծախքերը հոգալ։ Վեցերորդ՝ Բագուի կամ
Թիֆլիսի մէջ կազմել այնպիսի ակցիոներական-եր-
կրագործական մի ընկերութիւն, որի անդամակ-
ցական վճարը մատչելի լինէր նոյն իսկ թէ միջակ
քաղաքացուն և թէ գիւղացուն։ Այսպիսով կկազ-
մուէր մի խոշոր դրամագլուխ և այդ դրամագլխով
կարելի է գիւղական բանկ հիմնել Ուտիացոց աշ-
խարհի բազմամարդ գիւղաքաղաքներից մէկում։
Երկրագործ ժողովրդի տնտեսական վիճակը բա-
ւականացնելու համար կարելի է բանալ երկրագոր-
ծական և գիւղատնտեսական գործերի վերաբե-
ւեալ պէսպէս մեքենաների և գործիքների մի
մեծ պահեստ։ Իսկ ազնուացրած կենդանիների ու
պտղատու ծառերի համար հաստատել այնպիսի
կայարաններ, որոնցից Հայ գիւղացիք կարողա-
նային լիուլի օգտուել։ Այսպիսով թէ ակցիոներա-
կան - երկրագործական ընկերութիւնը կշահուի
առատապէս և թէ երկրագործ ու տնտեսապէս
ընկճուած ժողովրդին մեծ բարիքներ արած կը-
լինի։ Եօթերորդ՝ նշանակել Ուտիացոց աշխարհի
համար այնպիսի շրջիկ քարոզիչ մի քահանայ և
կամ վարդապետ, որ խօսելու և քարոզելու շնորհ
ունենար, որ կոշտ ու կոպիտ գիւղացիների վը-
րէժխնդրութեան և առելութեան աւերիչ սերմե-
րը ջնջելու կարողութիւն ունենար, որի մշտական
բնակութեան տեղը լինէր Ճալէթի վանքը և որի
սրբազան պարտքը լինէր ձի նստել և շրջել գիւ-
ղէ գիւղ և անդադար քարոզէր ու համոզէր,